


Հանրահաշվի ընդունելության քննություն 9-ից 10-րդ դասարան (2015-2016 ուստարի)

Մաղթում ենք հաջողություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	Ընդ.

- (0,2) x -ի ի՞նչ արժեքների դեպքում է որոշված $\frac{1}{x^2-3x-4}$ արտահայտությունը:
- (0,2) Վերլուծել արտադրիչների. $x^2 - (1 + a)x + a =$
- (0,2) Գտնել $x_n = 3n^2 - 6n$ բանաձևով տրված հաջորդականության փոքրագույն անդամի համարը:
- (0,3) Գտնել x -ը, եթե հայտնի է, որ $\{9; x^2 - 9x + 40; 14; 5x - 1; 24\}$ համախմբի մեդիանը 20 է:
- (0,2) Գտնել հավանականությունն այն բանի, որ եռանիշ թվերից պատահականորեն ընտրված մեկը՝ կբաժանվի 5-ի:
- (0,2) Գրել մեկ անհայտով երկրորդ աստիճանի անհավասարում, որի լուծումը կարելի է լուսաբանել նկարով:



նկարով:

7. (0,3) Ամենաշատը քանի՞ միատեսակ ծաղկեփնջեր կարելի է կազմել 264 սպիտակ և 192 կարմիր վարդակակաչներից:

8. (0,4) Գտնել x -ը, եթե $1 + 7 + 13 + 19 + \dots + x = 280$:

9. (0,3) Պարզեցնել $\frac{x-y}{\sqrt{x}-\sqrt{y}} - \frac{x\sqrt{x}-y\sqrt{y}}{x-y}$ արտահայտությունը::

10. (0,5) Գտնել թվաբանական պրոգրեսիա կազմող b_1, b_2, b_3 թվերը, եթե հայտնի է, որ դրանց գումարը 30 է, իսկ $b_1 - 5, b_2 - 4, b_3$ թվերը կազմում են երկրաչափական պրոգրեսիա:

11. (0,3) a -ի ի՞նչ արժեքների դեպքում $2x^2 + x + 2a^2 = 0$ հավասարումը ունի իրարից տարբեր արմատներ:

12. (0,4) Լուծել հավասարումների համակարգը՝
$$\begin{cases} \frac{1}{x} - \frac{1}{y} = -\frac{1}{12} \\ x - y = 1 \end{cases}$$

13. (0,5) Մեկ դետալ մշակելու վրա առաջին բանվորը ծախսում է 6 րոպե քիչ ժամանակ, քան երկրորդը: Բանվորներից յուրաքանչյուրը քանի՞ դետալ կմշակի 5 ժ-ում, եթե առաջինն այդ ժամանակամիջոցում մշակում է 25 դետալ ավելի, քան երկրորդը: